



ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. սոցիալ-տնտեսական ճգնաժամ, տնտեսության իմունային համակարգ, արտակարգ իրավիճակների կառավարում, համավարակի ռիսկեր

Արմեն ՃՈՒՂՈՒԻՅԱՆ


Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1981 թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (այժմ՝ ՀՊՏՀ): 1983-1986 թթ. սովորել է Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն ՀՊՏՀ-ում: Հեղինակ է մոտ 180 գիտական հոդվածների, 16 ուսումնական ձեռնարկների, 4 մենագրության:

Իմունիտետը, որ բնորոշ է կենդանի օրգանիզմներին՝ հիվանդություններին դիմակայելու և վարակները հաղթահարելու համար, որպես կանոն, մասնագիտական գրականությունում չի ներկայացվում որպես սոցիալ-տնտեսական կապեզորիա: Հոդվածում փորձ է արվում մեկնաբանելու «սոցիալ-տնտեսական իմունիտետ» եզրույթը՝ այն ներկայացնելով համավարակի ազդեցության տեսանկյունից: Մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական համակարգը դիտարկվում է գոյապլանման, դիմադրողականության համար տեքստում, որը մեկ բառով կարելի է բնորոշել որպես իմունիտետ: Համաճարակների ընթացքում հատկապես իրենց ամուր են զգում այն ազգերն ու էթնիկ միավորումները, որոնցում, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, շարունակաբար ձևավորվում է բավարար իմունիտետ՝ սոցիալ-տնտեսական առումով:

Ինչպիսի՞ն կլինի COVID-19-ի սոցիալ-տնտեսական հետպահիծը

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ COVID 19-ի զոհ են դառնում հիմնականում մեծահասակներն ու խրոնիկական հիվանդություններով տառապող անձինք (գծապատկեր 1): Համավարակը, բնականաբար, ունենում է նաև սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներ: Սակայն, այս ամենին զուգահեռ, արդեն իսկ դրսևորվում են որոշակիորեն դրական արդյունքներ՝ հակազդելով այն արատավոր մրցավազքին, որը, շարունակվելով տասնամյակներով, մեր հասարակությանը հասցրել էր վտանգավոր անդունդի եզրին:



ԳԾԱՊՈՍԿԵՐ 1

COVID-19 համաճարակով պայմանավորված մահացության դեպքերի բաշխումն ըստ տարիքային խմբերի¹

Ճանապարհորդության և բիզնեսի նկատմամբ սահմանափակումները, ի վերջո, դրականորեն են անդրադառնում մոլորակի աղտոտվածության մակարդակի վրա: NASA-ի ներկայացրած արբանյակային պատկերներն ապացուցում են, որ այս տարեսկզբից Չինաստանի երկնակամարում նկատելի են ազոտի երկօքսիդի (NO₂) մակարդակի կայուն անկման երևույթներ: Բնականաբար, դա արդեն իսկ պայմանավորված է համավարակի բռնկման հետևանքով տնտեսական գործունեության դանդաղեցմամբ: Համավարակը նույնպիսի անդրադարձ է ունենում նաև Իտալիայի ջրուղիների վրա՝ կտրուկ վերափոխումներ արձանագրելով Վենետիկի ջրանցքներում, որոնք բյուրեղային են դարձել զբոսաշրջության բացակայության պատճառով: Նավերի և այլ տրանսպորտային միջոցների զգալի կրճատման ուղղությամբ Իտալիայի կարանտինային միջոցառումների շնորհիվ՝ ներկայումս Վենետիկի ջրանցքներում հնարավոր է տեսնել նույնիսկ ձկների վտանգներ:

Արդյունքում ինչպե՞ս է համավարակի շեմին

հասել էր մի իրավիճակի, երբ արդեն չէր էլ նկատում, որ հայտնվել է շոայլ ապրելակերպի մրցավազքի արատավոր ճիրաններում: Ընտանիքի բոլոր չափահաս անդամները ցանկանում էին ունենալ անձնական օգտագործման ավտոմեքենա, հնարավորինս ակտիվորեն ճամփորդել, վաստակել առավելագույն գումար, որ նորից ու նորից վատնեն ճոխ ապրելակերպի նպատակով: Արդյունքում՝ լարված աշխատանքային օր, ընկճախտ (դեպրեսիա), ընտանեկան սառը հարաբերություններ, մարդասիրության կորուստ, սոցիալական ինքնամեկուսացում, շրջապատի նկատմամբ անտարբերություն, եսակենտրոնության (էգոիզմի) խորացում...

Համավարակը կարծես եկավ վերարժևորելու և սրբագրելու մեր ապրելակերպն ու սպառողական վարքագիծը: Կարծում ենք՝ այս արհավիրքից հետո անհատները պետք է վերադասավորեն իրենց սպառողական զամբյուղի կառուցվածքը՝ փոքրինչ զուսպ վարքագիծ ցուցաբերելով դեպի շոայլություն տանող ծախսերի հանդեպ, ավելի պահպանողական ու զգուշավոր լի-

¹ Коронавирус: для кого он особенно опасен и почему?, <https://www.dw.com/ru>

նելով ֆինանսական պաշարների կուտակման նկատմամբ՝ այդպիսով բարձրացնելով իրենց պատրաստականության մակարդակը հետագա փորձությունների ռիսկերին դիմակայելու ուղղությամբ:

Հաշվարկները, որ կատարվել են ըստ Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Բրյուզի ներկայացրած մոդելի, վկայում են, որ Չինաստանում COVID-19 համավարակի հետևանքով մահացածների թիվը քսանապատիկ ավելի փոքր է, քան մինչհամավարակային պայմաններում օդի աղտոտվածության պատճառով հիվանդություններից մահացողներին²: Այս ամենով պայմանավորված, կարծում ենք, որ զգալի կլինեն նաև համավարակի բացասական հետևանքներին ուղեկցող սոցիալ-տնտեսական դրական դրսևորումները, մասնավորապես՝ կմեղմվեն ավտոճանապարհային խցանումները, փոքր-ինչ կպասիվանա մարդկանց միջազգային շարժունությունը, կկրճատվեն ավիաթռիչքերը, որոնք իրենց վառելիքի արտանետումներով արդեն հանգեցնում էին բնապահպանական աղետի³: Միաժամանակ, եթե զբոսաշրջային քաղաքների իշխանությունները, շահույթ ստանալու մոլուցքին տրված, տուրք էին տալիս զբոսաշրջային ծառայությունների մատուցման մրցավազքին և գրեթե չէին էլ նկատում, թե ինչպես են իրենց քաղաքները հայտնվում աղբի, օդի անթույլատրելի աղտոտվածության մեջ, ապա գոնե հիմա կվերաբժևորեն իրենց գործառույթները:

Դա վերաբերում է նաև անհատներին, որոնք սկսել էին շրջանցել հանրային հիգիենիայի պահպանման պարտավորությունները և իրենց հաշիվ չէին տալիս, թե ինչպես են իրենց գործունեությամբ վնաս հասցնում առողջապահությանն ու շրջապատին⁴: Համավարակը պարտավորեց-

րեց վերհիշելու մեր սոցիալական պատասխանատվությունը ոչ միայն անձնական, այլև հանրային հիգիենայի նկատմամբ:

Ինչպիսի սոցիալ-տնտեսական իմունիտետ ձեռք կբերենք համավարակից հետո

Համավարակը կարծես ցնցեց և փորձության ենթարկեց նաև մինչ այժմ ձևավորված գլոբալացման հիմնասյունների ամրությունը: Այսօր պետությունները բացառապես հետապնդում են նեղ ազգային սոցիալ-տնտեսական շահեր՝ սեփական ժողովրդին համավարակից փրկելու համար, շրջանցելով այն փաստը, որ վարակը սահմաններ չի ճանաչում և «առանց վիզաների» ազատորեն ճափորդում է մոլորակով մեկ⁵: Դեռևս չի նկատվում պետությունների համախմբվածություն՝ համավարակի դեմ միասնական պայքարի հարցում: Այս իրավիճակում կապիտալի միգրացիան, բնականաբար, փոխելու է իր վարքագիծը:

Այսպես՝ եթե մինչ համավարակը Հայաստանից տեղի էր ունենում «կապիտալի փախուստ»⁶, այժմ արդեն, կարծում ենք, երկրների տնտեսական մեկուսացման պայմաններում հայկական կապիտալը կհանգրվանի հայրենիքում՝ խթանելով տեղական ներդրումները:

Նախորդ երեսուն տարիների մակրոտնտեսական կառավարման սխալները մեզ հուշում են, որ պետությունը տնտեսական զարգացման հարցում չպետք է հույսը դնի միայն շուկայական հարաբերությունների վրա՝ հանդես գալով պասիվ դիրքորոշմամբ: Ուստի կարևոր է պետության կանխարգելիչ դերն այս հարցում, որտեղ առաջնահերթ ենք համարում տնտեսական բարեփոխումների հետևյալ առանցքային ուղղությունները:

Նախ՝ անհրաժեշտ է իրականացնել ներ-

² The Unexpected Impact of A Pandemic On The Environment, <https://www.ifscience.com/environment/the-unexpected-impact-of-a-pandemic-on-the-environment>

³ Dynamics of beneficial epidemics, <https://www.nature.com/articles/s41598-019-50039-w>

⁴ Consumer attitudes: The short and long term effects of an unprecedented pandemic, <https://www.nutraingredients.com/Article/2020/04/15>

⁵ Economic impact of epidemics and pandemics, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2020/646195/EPRS_BRI\(2020\)646195_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2020/646195/EPRS_BRI(2020)646195_EN.pdf)

⁶ Ճողորդյան Ա., Խաչատրյան Ն., Կապիտալի փախուստի պատմական ընթացքը և կանխարգելման ուղիները ՀՀ-ում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, #1,(2) 2019, էջ 142:

մուծման փոխարինման քաղաքականություն: Ժամանակն է, որ պետությունը, ներկրումների սահմանափակման հաշվին, միջոցներ ձեռնարկի փոխարինող ապրանքների արտադրություններ հիմնելու և նոր աշխատատեղեր բացելու ուղղությամբ, ինչը պետք է իրագործվի աստիճանաբար՝ մեղմելով ներկրումների պակասուրդային ռիսկերը: Երկրորդ՝ անհրաժեշտ է, որ պետությունը ներդրումների աղբյուր փնտրի հենց երկրի ներսում՝ վարելով նպատակասլաց հարկաբյուջետային քաղաքականություն:

Եզրակացություն

COVID-19-ը եկավ ապացուցելու, որ համավարակային ռիսկերին դիմակայելիս ճգնաժամը հնարավորինս հեշտությամբ կհաղթահարեն այն երկրները, որոնք կձևավորեն սոցիալ-տնտեսական համակարգային իմունիտետ: Ու թեև Հայաստանի Հանրապետությունում գործում են հակաճգնաժամային և արտակարգ իրավիճակների կառավարման կառույցներ, կայացվում համավարակի սոցիալ-տնտեսական վնասների փոխհատուցման մասին կառավարության որոշումներ, որոնք ներկայում մեկ տասնյակից ավելի են, սակայն, կարծում ենք, որ անգամ այս գործողությունները բավարար չեն համավարակային ռիսկերի զսպման համար: Այս առումով, կարևոր ենք համարում համավարակների դեմ սոցիալ-տնտեսական իմունային համակարգի ձևա-

վորումը, որի առանցքում կանգնած կլինի պետությունը:

Որքան էլ որ համավարակի պայմաններում «բոլորը դեմքով շրջվում են դեպի պետությունը», միևնույնն է, պահուստային բյուջետային միջոցները չեն բավարարում նման արհավիրքներին դիմակայելու համար: Ուստի ֆինանսական պաշարների ձևավորմամբ համավարակային ռիսկային փոխհատուցումը չի կարող լիարժեք լուծում ստանալ, եթե չձևավորվի սոցիալ-տնտեսական իմունային համակարգ, որն իր մեջ ներառում է տնտեսության մեջ պետության ճկուն միջամտությունը, միջազգային շուկաներից կախվածության ռիսկերի թուլացումը, բազմազանեցված (դիվերսիֆիկացված) տնտեսավարումը, ազգաբնակչության սպառողական վարքագծային փոփոխությունը, սոցիալական պատասխանատվության նորմերի վերանայումը:

Եվ եթե COVID-19-ի իմունիտետի պատվաստանյութի ստեղծումը կարող է կանխարգելել համավարակի բռնկումն ազգաբնակչության շրջանում, ապա ինչու չմտածել սոցիալ-տնտեսական իմունային համակարգի ձևավորման մասին՝ փորձելով ուժեղացնել պետության դիմադրողականությունն արտակարգ իրավիճակների ժամանակ և դրանով իսկ կառավարելի դարձնելով համավարակային ռիսկերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Коронавирус: для кого он особенно опасен и почему?, <https://www.dw.com/ru>
2. The Unexpected Impact Of A Pandemic On The Environment, <https://www.iflscience.com/environment/the-unexpected-impact-of-a-pandemic-on-the-environment->
3. Dynamics of beneficial epidemics, <https://www.nature.com/articles/s41598-019-50039-w>
4. Consumer attitudes: The short and long term effects of an unprecedented pandemic, <https://www.nutraingredients.com/Article/2020/04/15/>
5. Economic impact of epidemics and pandemics, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2020/646195/EPRS_BRI\(2020\)646195_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2020/646195/EPRS_BRI(2020)646195_EN.pdf)
6. Ճողողյան Ա., Խաչատրյան Ն., Կապիտալի փախուստի պատմական ընթացքը և կանխարգելման ուղիները ՀՀ-ում, «Պատմություն և քաղաքականություն», գիտական հանդես, #1,(2), 2019, էջ 142:

